ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

23 մարտի շաբաթ 2024
տպագրության ԺԳ տարի

40
(2890)

100 դրամ

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՏԱՎՈՒՇՈՒՄ ՆՈՐ ՊԱՅՔԱՐ ԿՍԿՍՎԻ

Տավուշում առաջիկայում կարեւոր զարգացումներ են սպասվում: «Ժողովուրդ» օրաթերթը օրերս գրել էր, որ ընդդիմությունը պատրաստվում է ապրիլից վերսկսել փողոցային պայքարը. անհնազանդության ակցիաներ կլինեն եւ Երեւանում, եւ մարզերում: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ անհնազանդության պայքարի այս փուլը սկսվելու է Տավուշի մարզից, որն այս պահին նոր զիջումների վտանգի տակ է: Բանն այն է, որ Նիկոլ Փաշինյանի՝ Տավուշ կատարած վերջին այցը իրար է խառնել ողջ մարզը, տեղացիներն ահաբեկված են, անհանգիստ են, չգիտեն՝ ինչ ճակատագիր է սպասվում իրենց: Ահա այս անորոշ իրավիճակում տավուշցիները մտադիր են դառնալ առաջամարտիկ, ուստի հանրության դժգոհության ալիքը կսկսի հենց Տավուշի մարզից, այնուհետեւ «կտարածվեն» այլ մարզերում ու Երեւանում: Ավելին՝ ինչպես մեր աղբյուրներն են փոխանցում, հանրության այս անհնազանդության ակցիաները մտադիր են իրենց ձեռքը վերցնել Տավուշի թեմի առաջնորդ գերաշնորհ Բագրատ Սրբազանը եւ Շիրակի թեմի առաջնորդ Միքայել արքեպիսկոպոս Աջապահյանը: Մեզ հետ զրույցում Բագրատ Սրբազանը հարցի առնչությամբ ասաց. «Ժողովուրդը պարբերաբար հավաքվում, ակցիաներ է անում, մենք խնամում ենք, քաջալերում ենք, պաշտպանում ենք, մեր իրավունքները չե՞ն: Հիմա, որպես այդպիսին, ակցիաների խնդիր չկա, տեսնենք՝ ինչ է լինում»,-ասաց նա: Սրբազանից հետաքրքրվեցինք նաեւ, թե Նիկոլ Փաշինյանի այցից հետո ինչ վիճակ է մարդկանց մոտ, ինչ ահանգստություններ կան, ինչ են պատրաստվում անել. «Անհանգստություն բոլորիս մոտ կա, բայց տրամադրությունը նորմալ է: Թե ինչ են անելու, կանեն՝ կերեւա»:

Հշխանության ներկայացուցիչները, որոնք մերժում էին խնամի-ծանոթ-բարեկամ թեզը, տարեցտարի ավելի են արմատավորում իրենց մեջ այն առավել սոսկալի դրսեւորումներով: Այս անգամ շարքը համալրում է ՀՀ առողջապահության փոխնախարար Լենա Նանուշյանը: «Ժողովուրդ» օրաթերթին տեղեկություններ հասան, որ Լենա Նանուշյանը, օգտվելով իր պաշտոնի բերումով ընձեռնված հնարավորություններից, որդու առողջական վիճակի վերաբերյալ այնպիսի փաստաթղթեր է հավաքել, որ փոխնախարարի որդին ազատվել է զինծառայությունից: «Ժողովուրդ» օրաթերթը փորձեց այս տեղեկությունները ճշտել հենց Նանուշյանից: Կապ հաստատեցինք փոխնախարար Նանուշյանի հետ, սակայն վերջինս, տեղեկանալով՝ ով է զանգահարողը, ասաց, որ դասի է Ամերիկյան համալսարանում, խնդրեց զանգահարել մի փոքր ուշ: Փորձեցինք ավելի ուշ կապվել, Նանուշյանն այլեւս չպատասխանեց զանգերին: Փորձեցինք առողջապահության նախարարի մամուլի քարտուղար Մարիամ Ծատրյանից ճշտել մեր ունեցած տեղեկությունները, որն էլ մեզ պատասխանեց հետեւյալը. «Ես վստահ եմ՝ գիտեք՝ բժշկական գաղտնիքի մասին սահմանումը, օրենքի կետը: Ես իրավահարգ եմ: Այս հարցը նախարարի կամ նախարարության գործառութային հարց չէ, չեմ կարող մեկնաբանել: Բայց թե ունի առողջական խնդիր կամ չունի, ապա դա համարվում է բժշկական գաղտնիք»: Այդպես էլ չկարողացանք մեր ունեցած տեղեկության վերաբերյալ հենց փոխնախարարից մեկնաբանություններ ստանալ: Այն, որ նա թաքնվեց լրագրողից, խիստ մտահոգիչ է եւ ամրացնում է այն միտքը, որ առողջապահութան փոխնախարարի որդին բանակից ազատվել է առողջության հիմքով, որի մանրամասները չենք հրապարակում՝ հարգելով մարդու անձնական տվյալների պահպանման անհրաժեշտությունը եւ բժշկական գաղտնիքը:

Ինչ փուլում է գտնվում էկոնոմիկայի արդեն նախկին նախարար Վահան Քերոբյանի դեմ հարուցված քրեական գործը: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ Քերոբյանի գործով այս պահին ստուգվում են համակարգիչներում առկա տեղեկությունները: Հիշեցնենք, որ էկոնոմիկայի արդեն նախկին նախարար Վահան Քերոբյանին «Սիներջի»-ի վերաբերյալ քրեական գործով մեղադրանք է առաջադրվել, եւ նա գտնվում է տնային կալանքի տակ: Նա տնային կալանքի տակ է գտնվում փետրվարի 16-ից: Ըստ նախաքննական մարմնի՝ ՀՀ էկոնոմիկայի նախարարության կարիքների համար ծառայության ձեռք բերման մրցույթի ընթացքում կատարված առերեւույթ չարաշահումների վերաբերյալ քրեական վարույթով քրեական հետապնդում է հարուցվել 8 անձի նկատմամբ: Մասնավորապես, ՀՀ էկոնոմիկայի նախարարության մի շարք պաշտոնատար անձինք, իրենց ղեկավար պաշտոնատար անձի հանձնարարությամբ, մրցույթի ընթացքում հանդիպումներ ու հեռախոսազրույցներ են ունեցել «Ս» ընկերության ներկայացուցիչների հետ, նրանց հետ քննարկել մրցույթի պայմանները, ընդհուպ նրանց տրամադրել մրցակից «Հ» հիմնադրամի կողմից հանձնաժողովին ներկայացված փաստաթղթերը եւ նրանց օժանդակությամբ մրցույթի ընթացքում սահմանել այնպիսի նոր կամ փոփոխված պայմաններ, որոնց հիմնադրամի ներկայացրած փաստաթղթերը կարող են դիտվել չհամապատասխանող՝ հնարավորություն տալով նրան հեռացնել մրցույթից: Սույն քրեական գործով մեղադրյալ են ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի եղբոր կինը՝ Անի Գեւորգյանը, «Սիներջի» ընկերության ղեկավար Աշոտ Հովհաննիսյանը եւ այլ անձինք:

Աջափնյակի դատարանի կաշառքի գործով կալանավորված դատավոր Արուսյակ Ալեքսանյանի գործով առաջիկայում Հակակոռուպցիոն դատարան կհրավիրվի Երեւան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի նախագահ Գագիկ Պողոսյանը: Նա այդ գործով վկա է, եւ առաջիկայում նրան հենց վկայի կարգավիճակում էլ հրավիրելու են հարցաքննության: Նշենք, որ դատավոր Արուսյակ Ալեքսանյանը մեղադրվում է Քննչական կոմիտեի տարածքային ստորաբաժանումներից մեկի վարույթում գտնվող քրեական վարույթով մեղադրյալ, իր եղբոր ընկերոջ եւ իր մտերիմ փաստաբան Էրիկ Ալեքսանյանի պաշտպանյալի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառված կալանքը գրավով փոխարինելու միջնորդությունն իրեն մակագրելու, ապա այն բավարարելու ուղղությամբ քայլեր ձեռնարկելու համար: Ըստ ԱԱԾ-ի առաջադրած մեղադրանքի՝ դատավոր Արուսյակ Ալեքսանյանն ի վերջո մեղադրյալ Սերգեյ Գրիգորյանի կալանքը փոխարինել էր գրավով: Այո, Սերգեյ Գրիգորյանը բոլորին հայտնի Ֆազն է:

ԶՐՈՒՅՑ

«ԽՈՍՔՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԳՈՏԻՆԵՐԻ ՄԱՍԻՆ Է»

Հայաստանի դիվանագիտական հիմնադրամի տնօրեն, լրագրող Նաիրի Հոխիկյանն ArmLur.am-ի հետ զրույցում ներկայացրել է վերջերս Տավուշ իր կատարած այցից մանրամասնություններ եւ խոսել գյուղացիների տրամադրվածությունից:

-Պարոն Հոխիկյան, օրերս բռունքննարկվեց Տավուշի մարզի 4 գյուղերի հանձնման լուրը, եւ Դուք այցելեցիք Տավուշի մարզի սահմանամերձ բնակավայրերը: Խնդրում ենք այսօր ականատեսի աչքերով ներկայացնել՝ ինչ իրավիճակ էր այնտեղ, տավուշեցիները ինչպես են պատրաստվում:

-Նախ մի քանի ճշգրտում անենք. Տավուշի մարզից հենց բնակելի գյուղեր չեն հանձնվում, այսինքն՝ գոնե այս պահի դրությամբ չեն հանձնվում, կամ որպեսզի մեր հայրենակիցները ավելի լավ պատկերացնեն, թե ինչի մասին է խոսքը, ոչ թե Նիկոլ Փաշինյանը պատրաստվում է Տավուշի մարզի բնակելի գյուղեր հանձնել Ադրբեջանին, այլ գյուղերի տարածքներ, ինչն իր հետ ավտոմատ կերպով բերելու է 10-ից ավելի գյուղերի հայաթափման: Երբ Նիկոլ Փաշինյանն ասում է, որ 4 գյուղի տարածք պիտի հանձնվի Ադրբեջանին, ինչ որ մերն է, մերն է, ինչ որ մերը չէ, մերը չէ, խոսքը Սովետական Ադրբեջանից 1991-1993 թվականներին ազատագրված անվտանգության գոտիների մասին է: Այնտեղ կան ինչ-որ ժամանակ ադրբեջանցիներով բնակեցված գյուղերի տարածքներ: Խոսքը Խեյրմլիի մասին է, Ղըզըլհաջիի մասին է, Բաղանիս-Այրումի մասին է. օրինակ՝ Բաղանիս-Այրումը անմիջապես կպած է եղել Տավուշի մարզի Բաղանիս գյուղին, բայց եթե հենց այդպես էլ մնար ամբողջ 30 տարիների հակամարտության ժամանակ, այինքն՝ սովետական վարչական շրջանների սահմանները այնքան մոտ են եղել իրար, որ Հայաստանի եւ Ադրբեջանի զորքերը եթե այդքան մոտ իրար կանգնեին, պարբերաբար ադրբեջանցիները մեր գյուղերն էին գնդակոծելու, մենք գնդակոծելու էինք ադրբեջանցիների գյուղերը: Մենք այն ժամանակ ուժեղ էինք, մենք ավելի նպատակահարմար համարեցինք, որ պիտի մեր գյուղերի հարակից տարածքները ազատագրենք, որպեսզի մեր հայրենակիցները Տավուշի մարզում անվտանգ ապրեն: Հիմա եթե Փաշինյանն այդ տարածքները հանձնում է Ադրբեջանին, ադրբեջանցիները գալու են, շատ հարմարավետ դիրքերում են լինելու, եւ, օրինակ, Բաղանիս գյուղից ընդամենը մի 100 մետր հեռու են լինելու, հանգիստ կարող են ավտոմատով կրակել, քարով կարող են խփել, Կիրանց գյուղի անմիջապես մեջն են լինելու: Ուզում ես, օրինակ, Իջեւանից գնալ Կիրանց գյուղ, դու պիտի մտնես ադրբեջանցիների միջով դուրս գաս, եթե Փաշինյանի ծրագիրն իրականանա:

Զրուցեց ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆԸ

ՀԱՅԱՍՏԱՆ-ՈՒՐՈՒԳՎԱՅ

ԱՆԴՐԱԴԱՐՁ՝ ՀԱՐՑԵՐԻ ԼԱՅՆ ՇՐՋԱՆԱԿԻ

Հայաստանի արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանը մարտի 21-ին Մոնտեվիդեոյում հանդիպում է ունեցել Ուրուգվայի Սենատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովում, որին մասնակցել են հանձնաժողովի նախագահ Խոսե Կառլոս Մահյանը, մասնակցել են հանձնաժողովի՝ տարբեր քաղաքական կուսակցություններ ներկայացնող անդամներ, ինչպես նաեւ Հայաստան-Ուրուգվայ խորհրդարանական բարեկամական խմբի անդամներ:

Ինչպես տեղեկանում ենք ԱԳՆ-ից, հանդիպմանն անդրադարձ է կատարվել հարցերի լայն շրջանակի:

Անդրադառնալով Հայաստանի եւ Ուրուգվայի միջեւ երկկողմ հարաբերություններին՝ զրուցակիցներն ընդգծել են երկար պատմություն ունեցող բարեկամական կապերի հետագա խորացման հարցում երկուստեք առկա մեծ պատրաստակամությունը: Այս համատեքստում ընդգծվել է Մոնդեվիդեոյում ՀՀ ռեզիդենտ դեսպանություն բացելու որոշման կարեւորությունը՝ հույս հայտնելով, որ այն կնպաստի նաեւ երկու երկրների միջեւ առեւտրատնտեսական կապերի ընդլայնմանը:

Երկուստեք գոհունակությամբ նշվել է Ուրուգվայի մեծաթիվ հայ համայնքի դերը, որը, չնայած երկու երկրների միջեւ աշխարհագրական հեռավորությանը, Ուրուգվայի հասարակության մեջ ունեցած իր տեղով յուրովի կերպով լրացնում է առկա ամուր պատմամշակութային կապերը:

Իր խոսքում նախարար Միրզոյանն անդրադարձել է Հայաստանում ժողովրդավարական բարեփոխումների ընթացքին՝ ընդգծելով, որ ժողովրդավարական սկզբունքներին հավատարմությունը միտված է ոչ միայն ՀՀ ինքնիշխանության ամրապնդմանը, այլ նաեւ համախոհ երկրների, այդ թվում՝ Ուրուգվայի հետ հարաբերությունների սերտացմանը:

Անդրադառնալով տարածաշրջանային թեմաներին՝ նախարար Միրզոյանը հանգամանալից ներկայացրել է Հարավային Կովկասում անվտանգային իրավիճակը, հարեւանների հետ հարաբերությունների կարգավորմանն ուղղված ջանքերը՝ միտված տարածաշրջանում հարատեւ կայունության հաստատմանը: Արարատ Միրզոյանը ներկայացրել է Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ հարաբերությունների կարգավորմանն ուղղված պայմանագրի նախագծում այս պահին առկա հիմնական հարցերը, որոնց հանգուցալուծումը հայկական կողմը տեսնում է հանրաճանաչ սկզբունքներին՝ տարածքային ամբողջականության եւ միջազգայնորեն ճանաչված սահմանների անքակտելիության նկատմամբ հստակ հանձնառության միջոցով:

Հարավային Կովկասի զարգացման եւ լոգիստիկ առավելությունների լավագույնս օգտագործման համատեքստում Արարատ Միրզոյանը շեշտել է տարածաշրջանային տնտեսական ու տրանսպորտային կապուղիների՝ ինքնիշխանության եւ իրավազորության հարգման, հավասարության եւ փոխադարձության սկզբունքների հիման վրա ապաշրջափակման միջոցով ընձեռնվելիք հնարավորությունները:

Նախարար Միրզոյանը, անդրադառնալով Հայաստանի համար մարտահրավերներով լի ժամանակաշրջանում միջազգային հանրության կողմից հասցեական ուղերձներին, հավելել է. «Ես այստեղ եմ նաեւ մեր երախտիքը հայտնելու տարբեր ժամանակահատվածներում Հայաստանի համար առաջնահերթություն ներկայացնող հարցերի շուրջ ձեր արտահայտած սկզբունքային դիրքորոշումների համար»:

ՀՀ արտաքին գործերի գերատեսչության ղեկավարը ներկայացրել է վերջին երեք տարիների ընթացքում Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված շուրջ 150 հազար հայ բնակչության կարիքների հասցեագրման ուղղությամբ ՀՀ կառավարության ջանքերը:

Արարատ Միրզոյանը պատասխանել է Ուրուգվայի խորհրդարանականներին հետաքրքրող այլ հարցերի:

ՏԵՂՅԱԿ ՉԵՆ

Ոստիկանությունը տեղյակ չէ, թե իր աշխատակիցները ուր եւ ինչի համար են բիրտ ուժ կիրառելով տարել Նարեկ Սամսոյանին. այս մասին Fաձebook-ի իր էջում հայտնել է ԱԺ «Պատիվ ունեմ» խմբակցության պատգամավոր Թագուհի Թովմասյանը:

«Քիչ առաջ տեղեկացա, որ դիմակավորված ոստիկաններն ու քաղաքացիական հագուստով անձինք հարձակվել եւ բռնի կերպով, արժանապատվությունը նսեմացնելով, տարել են «Քաղաքացիական գիտակցություն» ՀԿ նախագահ Նարեկ Սամսոնյանին:

Իմ գրասենյակի աշխատակիցներն օպերատիվ կերպով կապ հաստատեցին ՀՀ ներքին գործերի նախարարության, սակայն պատասխան չստացվեց:

ՀՀ ոստիկանության Երեւան քաղաքի վարչության կենտրոնական բաժնի հերթապահ Ռ. Հարությունյանը հայտնեց, որ Ոստիկանությունը ոչ մի տեղեկություն չունի դեպքի վերաբերյալ:

Կադրում ակնհայտ երեւում են ոստիկանության աշխատակիցների գործողությունները»,- նշել է նա եւ տեղադրել Նարեկ Սամսոնյանին բերման ենթարկելու կադրերը:

ԿՐԱԿՈՑ՝ ՎԱՅՈՑ ՁՈՐՈՒՄ

Մարտի 20-ին արտակարգ դեպք է տեղի ունեցել Վայոց ձորի մարզում: Ժամը 20:40-ի սահմաններում ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության Վայոց ձորի մարզային վարչությունում եւ ոստիկանության Եղեգնաձորի բաժնում օպերատիվ տեղեկություններ են ստացվել, որ Եղեգնաձորում կրակոցներ են հնչել:

Ոստիկաները տեղում պարզել են, որ Վայոց ձորի մարզի բնակիչ՝ 52-ամյա Վարդուշ Ա.-ի հետ Հերմոն բնակավայրի իրենց առանձնատան դիմաց կենցաղային հարցերի շուրջ ծագած վիճաբանության ժամանակ 60-ամյա Սիրեկան Բաբայանը բռունցքով հարվածել է նրա կրծքավանդակին՝ պատճառելով ֆիզիկական ցավ, ապա հայհոյանքներ է հնչեցրել եւ 2 անգամ կրակոց է արձակել, որից մեկը անմիջապես ոտքերի տակ, որը Վարդուշ Ա.-ին վնաս չի պատճառել, սակայն վերջինս ոստիկաներին հայտնել է, որ այդ ամենի հետեւանքով իր մոտ առաջացել է վախի եւ տագնապի զգացողություն:

Ոստիկանները Ս. Բաբայանին հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի առկայության հիմքով ձերբակալել եւ տեղափոխել են ոստիկանության Եղեգնաձորի բաժին, որտեղ նա հայտնել է, որ կրակոցը արձակել է իր անվամբ հաշվառված «ԻԺ» մոդելի մարտական ատրճանակից նշված բնակավայրի Սիրանեսի փողոցում շների միջեւ տեղի ունեցող կռվին վերջ տալու նպատակով: Ս. Բաբայանը ոստիկաններին է ներկայացրել նշված ատրճանակը:

Դեպքի փաստով ոստիկանության Եղեգնաձորի բաժնում կազմվել են փաստաթղթեր, որոնք Ս. Բաբայանի եւ նշված ատրճանակի հետ միասին ներկայացվել են ՀՀ քննչական կոմիտեի Վայոց ձորի մարզային քննչական վարչություն, որտեղ դեպքի փաստով նախաձեռնվել է քրեական վարույթ:

Կայքի տեղեկություններով՝ Ս. Բաբայանը Եղեգնաձորի նախկին քաղաքապետն է:

Ո՞ՆՑ Է ՊԱՇՏՊԱՆԵԼՈՒ

«Մենք վարչապետին պատասխանը տվել ենք, որ ոսկեպարցիները զիջելու բան չունեն, մենք հետ գնալու ճանապարհ չունենք, Ոսկեպարը հայրենիքի դարպասն է, Ոսկեպարի գլխին հայտնվելուց հետո հակառակորդը հայտնվելու է Վանաձորի գլխին»,- Ոսկեպարում «Միասին» շարժման անդամների հետ հանդիպման ժամանակ նշեց գնդապետ Միհրան Մախսուդյանը:

«Մենք մեռնենք, էստեղ ենք մեռնելու, ոսկեպարցիները մեծից մանուկ պատրաստ են զենք վերցնելու, կռվելու: Էսօր Ոսկեպարն է, վաղը Վանաձորն է, մյուս օրը Գյումրին է, Երեւանն է»,-ասաց նա:

«Միասին» շարժման համակարգող Արամ Գ. Սարգսյանն էլ ասաց. «Մենք համաձայն ենք, բայց այդպիսի տրամադրություն պետք է լինի ամբողջ Հայաստանում, ոչ թե միայն Ոսկեպարում:

Մենք մարտի 27-ին հանրահավաք ենք կազմակերպում, մենք ոչ մի հույս չենք կապում այս իշխանության հետ: Հանրահավաքը ներկայացնելու է ԱԺ բոլոր խմբակցություններին, որ նրանք պետք է սկսեն վարչապետին անվստահության գործընթացը: Մենք՝ որպես ժողովուրդ, պետք է նոր իշխանություն ձեւավորենք. այս իշխանությամբ չենք կարող երկիրը պահել»:

Գյուղացիներից մեկն արձագանքեց. «Իսկ չե՞ք կարող կոչ անել, որ հողերը չտա: Որովհետեւ ձեր հեղափոխությունը չստացվեց, մեր հողերն էլ տրվեց, ավելի լավ չի՞ կոչ անեք, որ հողերը չտա. մեկ է, իշխանափոխությունը չի ստացվելու»:

Նախկին վարչապետ Հրանտ Բագրատյանը նախ գոհունակություն հայտնեց, որ գյուղացիների տրամադրությունը մարտական է, ապա հավելեց. «Մենք հիմա բանակ էլ ենք գնալու, բանակին պետք է համոզենք, որ ոչ մի քայլ հետ չկանգնի: Նիկոլ Փաշինյանը եկել էր Ոսկեպար եւ ասում էր՝ գյուղերը պետք է տանք, բայց դրանից հետո ձեզ պետք է կարողանանք պաշտպանել. Ո՞նց է պաշտպանելու»:

ՎԵՀԱԺՈՂՈՎ

ՀՀ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի գլխավորած պատվիրակությունը մարտի 22-27-ն աշխատանքային այցով Ժնեւում է՝ մասնակցելու Միջխորհրդարանական միության (IPU) 148-րդ վեհաժողովին:

ԱԺ-ից հայտնում են, որ պատվիրակության կազմում են Ազգային ժողովի նախագահի տեղակալ Հակոբ Արշակյանը, ՀՀ ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավորներ Հասմիկ Հակոբյանը, Ծովինար Վարդանյանը եւ Արսեն Թորոսյանը, ՀՀ ԱԺ «Հայաստան» խմբակցության պատգամավոր Լեւոն Քոչարյանը:

Այցի շրջանակում նախատեսվում են ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի ելույթը վեհաժողովում եւ մի շարք աշխատանքային հանդիպումներ:

ԱԳ ՆԱԽԱՐԱՐԻ ԱՅՑԸ

ՔՆՆԱՐԿՎԵԼ ԵՆ ՓՈԽԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

Պաշտոնական այցով մարտի 21-ին Մոնտեվիդեոյում գտնվող Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանը հանդիպում է ունեցել Ուրուգվայի Արեւելյան Հանրապետության ԱԳ նախարար Օմար Պագանինիի հետ:

Հայաստանի ԱԳ նախարարությունից հայտնում են, որ զրուցակիցները գոհունակությամբ արձանագրել են Հայաստանի եւ Ուրուգվայի միջեւ առկա քաղաքական երկխոսության բարձր մակարդակը՝ պատրաստակամություն հայտնելով քայլեր ձեռնարկել տարբեր ոլորտներում երկկողմ օրակարգն էլ ավելի հարստացնելու ուղղությամբ:

Երկուստեք ընդգծվել է, որ ՀՀ ԱԳ նախարարի այս պատմական այցը, ինչպես նաեւ երկու երկրների մայրաքաղաքներում ռեզիդենտ դեսպանությունների բացումը փոխգործակցությունը խորացնելու ցանկության լավագույն վկայությունն են:

Արարատ Միրզոյանը եւ Օմար Պագանինին մեծապես կարեւորել են ձեւավորված քաղաքական երկխոսության մակարդակին համահունչ առեւտրատնտեսական, գործարար կապերի զարգացումը, ինչպես նաեւ կրթական եւ բարձր տեխնոլոգիաների ոլորտներում առկա նոր հնարավորությունների առավելագույնս օգտագործումը: Երկուստեք ընդգծվել է Հայաստանի եւ Ուրուգվայի արտաքին քաղաքական գերատեսչությունների միջեւ քաղաքական խորհրդակցությունների անցկացման մեխանիզմի արդյունավետությունը՝ հաստատելով հաջորդ խորհրդակցությունները Երեւանում անցկացնելու մտադրությունը:

Երկու նախարարներն ընդգծել են նաեւ Ուրուգվայում մեծաթիվ հայ համայնքի յուրովի դերը հայ եւ ուրուգվայցի ժողովուրդների միջեւ բարեկամական կապերի ամրապնդման գործում: Այս համատեքստում հիշատակվել է այն, որ Ուրուգվայը, նախորդ դարասկզբին ապաստան տալով Հայոց ցեղասպանությունից փրկված հայերին, 1965 թվականին առաջինը ճանաչեց ցեղասպանությունը, իսկ այսօր իր հասարակական քաղաքական կյանքում տեսնում է հայ գործիչների, մասնագետների նշանակալի ներդրումը:

Հանդիպմանն անդրադարձ է կատարվել նաեւ բազմակողմ հարթակներում, միջազգային կազմակերպությունների շրջանակներում փոխգործակցության հարցերի:

Հանդիպման ընթացքում անդրադարձ է կատարվել նաեւ Հարավային Կովկասում տիրող անվտանգային իրավիճակին: Արարատ Միրզոյանն իր գործընկերոջն է ներկայացրել Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ հարաբերությունների կարգավորման գործընթացում վերջին զարգացումները, խաղաղության պայմանագրի շուրջ ընթացող բանակցությունները: ՀՀ ԱԳ նախարարը շեշտել է ինքնիշխանության եւ տարածքային ամբողջականության փոխադարձ եւ միանշանակ ճանաչման կարեւորությունը, որը պետք է հիմնված լինի 1991 թվականի Ալմա-Աթայի հռչակագրի վրա եւ ծառայի որպես Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ սահմանազատման քաղաքական հիմք:

Տարածաշրջանային տրանսպորտային եւ տնտեսական կապուղիների ապաշրջափակման համատեքստում նախարար Միրզոյանը ներկայացրել է ՀՀ կառավարության «Խաղաղության խաչմերուկ» ծրագիրը, վերջինիս միջոցով Հարավային Կովկասի եւ դրանից անդին ընձեռվող տնտեսական հնարավորությունները:

Արարատ Միրզոյանն ընդգծել է ներկայիս՝ մարտահրավերներով լի, խարխլված աշխարհակարգի պայմաններում միջազգային իրավունքի հանրահայտ սկզբունքներին միջազգային հանրության կողմից հավատարմության կարեւորությունը, ինչի բացակայությունն է, որ շարունակաբար հանգեցնում է նոր սրացումների: ՀՀ ԱԳ նախարարն իր երախտագիտությունն է հայտնել Ուրուգվայի կողմից Հայաստանի համար առանցքային հարցերի շուրջ մինչ օրս արտահայտված դիրքորոշումների համար:

Արարատ Միրզոյանը ներկայացրել է նաեւ Ադրբեջանի կողմից էթնիկ զտման հետեւանքով Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված հայ բնակչության կարիքների հասցեագրման նպատակով ՀՀ կառավարության կողմից իրականացված քայլերը:

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՀԱՆԴԻՊՈՒՄ

ԱԺ պատգամավոր Թագուհի Թովմասյանը սոցցանցի իր էջում գրում է. «Հանդիպում Հայաստանում Կանադայի արտակարգ եւ լիազոր դեսպանի հետ ՀՀ Ազգային ժողովում:

Պարոն Թըրներին երախտագիտությունս հայտնեցի Կանադայի հայանպաստ գործունեության համար՝ հատկապես կարեւորելով 2020թ. պատերազմի օրերին բայրաքթարների դետալների վաճառքի արգելքի Կանադայի մարդասիրական քայլը:

Ականատեսի աչքերով ներկայացրի իմ հայրենի Գեղարքունիքի մարզի անվտանգային խնդիրները:

Ընդգծեցի, որ այս պահին մենք ունենք Կանադայի կողմից Ադրբեջանի նկատմամբ պատժամիջոցներ կիրառելու կարիք, որովհետեւ ադրբեջանցիները դուրս չեն գալիս մեր ինքնիշխան տարածքներից:

Հիշեցրի, որ դեռ 2022թ. Կանադայում SOS էի հնչեցրել, որ տեղի է ունենում եւ անխուսափելիորեն տեղի է ունենալու ցեղասպանություն:

Խոսեցի Արցախի պատմամշակութային վայրերի, կոթողների՝ Ադրբեջանի կողմից ոչնչացնելու, հայկական հետքն Արցախի Հանրապետությունից վերացնելու մասին:

Արցախահայերը պետք է վերադառնան եւ տեր լինեն իրենց ունեցվածքին, իսկ միջազգային երաշխիքներն ուղղակի անհրաժեշտություն են»:

ԿՇԱՐՈՒՆԱԿՎԻ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ

Հաջորդ շաբաթ ԱԺ հանձնաժողովներում կշարունակվի Հայաստանի Հանրապետության կառավարության ծրագրի 2023 թվականի կատարման ընթացքի եւ արդյունքների մասին զեկույցի քննարկումը:

ArmLur.am-ը ԱԺ-ից տեղեկացավ, որ նախարարները կգնան խորհրդարան՝ ԱԺ գլխադասային հանձնաժողովներում զեկույցը ներկայացնելու: Այսպիսով, երկուշաբթի օրը՝ մարտի 25-ին, ԱԺ պաշտպանության եւ անվտանգության հարցերի մշտական հանձնաժողով կգնան ՀՀ պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանը, ՀՀ ներքին գործերի նախարար Վահե Ղազարյանը, ՀՀ ազգային անվտանգության ծառայության տնօրեն Արմեն Աբազյանը: Այդ օրը ԱԺ կգնան նաեւ ՀՀ էկոնոմիկայի նախարար Գեւորգ Պապոյանը, ՀՀ ֆինանսների նախարար Վահե Հավհաննիսյանը, ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալ Մնացական Սաֆարյանը՝ ԱԺ տարածաշրջանային եւ եվրասիական ինտեգրման հարցերի մշտական հանձնաժողովի նիստի կառավարության զեկույցը ներկայացնելու:

ՆԱԽԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՎԱՐՏՎԵԼ Է

ՎԻՃԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ՝ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՋ

Ավարտվել է Երեւանի 36-ամյա բնակչի կողմից աներոջ նկատմամբ սպանության փորձ կատարելու, կնոջը հարվածելու, սպանության սպառնալիքներ հնչեցնելու եւ ատրճանակի կերոով զենք պահելու դեպքերի առթիվ նախաձեռնված քրեական վարույթի նախաքննությունը:

«ՀՀ քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի քննչական բաժնում իրականացված նախաքննությամբ պարզվել է, որ 2023թ. նոյեմբերի 28-ին՝ ժամը 23:00-ից մինչեւ նոյեմբերի 29-ը՝ ժամը 02:30-ն ընկած ժամանակահատվածում, Երեւան քաղաքի Շահումյան փողոցում գտնվող տանը բնակվող ամուսինների միջեւ կենցաղային հարցերի շուրջ վիճաբանություն է առաջացել, որի ընթացքում ամուսինը՝ 36-ամյա տղամարդը, կնոջ նկատմամբ ֆիզիկական ներգործություն գործադրելու դիտավորությամբ երկու անգամ հարվածել է վերջինիս այտին:

Ժամը 02:30-ի սահմաններում կնոջ հայրը, դստեր խնդրանքով, որդու հետ միասին եկել են հիշյալ տուն, որտեղ ամուսինների միջեւ առկա տարաձայնությունների կապակցությամբ քաշքշուկ է առաջացել հիշյալ կնոջ եղբոր, հոր եւ ամուսնու միջեւ: Այդ ընթացքում վերջինս, վերցնելով իր անվամբ հաշվառված՝ «ՍԱՅԳԱ-410Կ» տեսակի որսորդական ողորկափող հրացանը, աներոջը եւ նրա որդուն առաջարկել է զրուցելու նպատակով դուրս գալ տանից:

Վերջիններս մերժել են առաջարկը, ինչից հետո տղամարդը դուրս է եկել տնից: Որոշ ժամանակ անց՝ ժամը 02:30-ից 03:00-ն ընկած ժամանակահատվածում, կինը երկու անչափահաս երեխաների, հոր եւ եղբոր հետ դուրս է եկել տնից, նստել հոր վարած «Նիսսան» մակնիշի ավտոմեքենան եւ հեռացել:

Բնակության վայրից մոտ 50 մետր հեռավորության վրա 36-ամյա տղամարդը որսորդական հրացանի փողը պահել է դեպի ավտոմեքենան: Վարորդը, արագացնելով ավտոմեքենայի ընթացքը, շրջանցել է նրան, սակայն 36-ամյա տղամարդը, իր կնոջ հորը ապօրինաբար կյանքից զրկելու դիտավորությամբ, ավտոմեքենայում գտնվող անձանց, այդ թվում՝ երկու անչափահաս երեխաների կյանքի համար վտանգավոր եղանակով վերոնշյալ որսորդական հրացանով 4 անգամ կրակել է ավտոմեքենայի, մասնավորապես՝ վարորդի ուղղությամբ, սակայն կրակոցներից երկուսը վնասել են ավտոմեքենայի մի քանի հատվածներ:

Դրանից որոշ ժամանակ անց՝ ժամը 03:30-ից 03:40-ն ընկած ժամանակահատվածում, 36-ամյա տղամարդը, աներոջ նկատմամբ հոգեկան ներգործություն գործադրելու դիտավորությամբ, զանգահարել է վերջինիս եւ հնչեցրել սպանության սպառնալիքներ, որի հետեւանքով նրա մոտ առաջացել են վախի եւ տագնապի զգացողություններ:

Պարզվել է նաեւ, որ 36-ամյա տղամարդը իր կողմից շահագործվող «Մերսեդես Բենց» մակնիշի ավտոմեքենայում ապօրինի պահել է ինքնաշեն եղանակով ձեւափոխված՝ ողորկափող հրազեն հանդիսացող «BARICAT R 2.5՛ S» մոդելի ռեւոլվեր, որը հայտնաբերվել է նրա անձնական խուզարկության ժամանակ:

Ձեռք բերված բավարար փաստերի հիման վրա՝ 36-ամյա տղամարդուն մեղադրանք է ներկայացվել՝ ՀՀ քրեական օրենսգրքի 335-րդ հոդվածի 1-ին մասով (Հրազենի, դրա հիմնական բաղկացուցիչ մասերի, ռազմամթերքի եւ այլ նյութերի, սարքերի, առարկաների ապօրինի շրջանառությունը), 195-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով (Ֆիզիկական ներգործությունը), 44-155-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ եւ 9-րդ կետերով եւ 194-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով (Հոգեկան ներգործությունը):

Նրա նկատմամբ որպես խափանման միջոց է կիրառվել կալանավորումը:

Նախաքննությունն ավարտվել է, քրեական վարույթի նյութերը՝ մեղադրական եզրակացությամբ, ուղարկվել են դատարան»,- ասված է հաղորդագրության մեջ:

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ՆԻՍՏԸ ՀԵՏԱՁԳՎԵՑ

Երեկ դատարանը պետք է մեղադրական ճառ ներկայացներ ոստիկանության զորքերի նախկին հրամանատար Լեւոն Երանոսյանի դեմ հարուցված քրեական գործով, սակայն դատավոր Հարություն Մանուկյանն ուշագրավ հայտարարություն արեց, որ Լեւոն Երանոսյանի առողջական վիճակը վատացել է, եւ նա դատարան չի կարող ներկայանալ: Նիստը հետաձգվեց:

Հայաստանի նախկին փոխոստիկանապետ, ոստիկանության զորքերի նախկին հրամանատար Լեւոն Երանոսյանը մեղադրվում է հեղափոխության օրերին ոստիկանության կողմից հատուկ միջոցներ կիրառելու ժամանակ պաշտոնեական լիազորություններն անցնելու մեջ: Լեւոն Երանոսյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա հատուկ միջոցների գործադրմամբ դիտավորությամբ կատարել է այնպիսի գործողություններ, որոնք ակնհայտորեն դուրս են եկել իր լիազորությունների շրջանակից եւ էական վնաս են պատճառել քաղաքացիների իրավունքներին ու օրինական շահերին, ինչպես նաեւ անզգուշությամբ առաջացրել են ծանր հետեւանքներ:

Ոստիկանության զորքերի նախկին հրամանատար, ոստիկանության գեներալ-լեյտենանտ Լեւոն Երանոսյանի փաստաբան Տիգրան Սաֆարյանը, վկայակոչելով Երանոսյանի ցուցմունքը, փոխանցել էր՝ հեղափոխության օրերին Երեւանի թե՛ Բաղրամյան պողոտայում, թե՛ Արցախի փողոցում ստեղծված իրադրությունն այնպիսին էր, որ կային հատուկ միջոցներ կիրառելու պայմաններ, հիմքեր, եւ այդ միջոցները կիրառվել են:

ՓԱԽՈՒՍՏԻ Է ԴԻՄԵԼ

ArmLur.am-ին հասած տեղեկությունների համաձայն՝ Վազգեն Սարգսյանի հասցեի 28/3-ում գտնվող Արիմիությունների շենքում մի խումբ անձանց միջեւ վիճաբանություն է տեղի ունեցել, որի մասնակիցներից մեկը «Ուժը հայրենյանց» կուսակցության նախագահ Տիգրան Արզաքանցյանի եղբորորդին է եղել՝ Նոյ Արզաքանցյանը: Նա դեպքից հետո փախուստի է դիմել, սակայն իրավապահները հայտնաբերել են նրան: Մեզ հայտնի դարձավ, որ Արզաքանցյանի եղբորորդու նկատմամբ խափանման միջոց է կիրառվել երկրից չբացակայելու արգելքը:

Մարտի 19-ին ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության Կենտրոնական բաժնի քրեական հետախուզության բաժանմունքի ծառայողները օպերատիվ տեղեկությունների հիման վրա օպերացիա են իրականացրել «Զվարթնոց» օդանավակայանում:

Ոստիկանները օպերատիվ տեղեկություններ էին ստացել, որ Հայաստան է ժամանում Գեղարքունիքի մարզի բնակիչ 31-ամյա Նոյ Արզաքանցյանը:

Ոստիկանները արդեն «Զվարթնոց» օդանավակայանում նկատում են նրան ու հենց այնտեղից էլ տեղափոխում են ոստիկանության Կենտրոնական բաժին:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԱՆՉԱՓԱՀԱՍՆԵՐ

ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԻՆԱՄԻԿԱՆ

ՀՀ քննչական կոմիտեն ներկայացրել է անչափահասների կատարած հանցավորության ընդհանուր դինամիկան՝ ըստ 2023-ի ընթացքում ՔԿ վարույթում քննված քրեական վարույթների:

«Ըստ այդմ, նախորդ տարի անչափահասների կողմից կատարված հանցագործությունների վերաբերյալ քննվել է 363 քրեական վարույթ՝ 2022-ին քննված 244 վարույթի դիմաց: Հետեւաբար, ըստ ամփոփված վիճակագրության, նախորդ մեկ տարվա ընթացքում արձանագրվել է անչափահասների կողմից կատարված հանցագործությունների կամ դրան ուղղված առերեւույթ հանցավոր արարքների վերաբերյալ նախաձեռնված քրեական վարույթների աճ՝ 119-ով կամ շուրջ 48 տոկոսով:

Նախաձեռնված 363 վարույթից 50-ի նախաքննությունն ավարտվել է եւ 63 անչափահասի վերաբերյալ մեղադրական եզրակացությամբ ուղարկվել դատարան: 2022-ին դատարան ուղարկված վարույթները եղել են 59-ը՝ 59 անչափահասի վերաբերյալ մեղադրանքով:

2023թ. դատարան ուղարկված վարույթների գերակշռող մասը վերաբերել են գողության եւ թմրամիջոցների հետ կապված դեպքերին:

Մասնավորապես՝ 50 վարույթներից

- 14-ը քննվել է գողության (28 %)
- 10-ը՝ թմրամիջոցներների ապօրինի շրջանառության հետ կապված (20 %)
- 9-ը՝ առողջությանը ծանր վնաս պատճառելու,
- 3-ը՝ խուլիգանության,
- 2-ը՝ սպանության,
- 2-ը՝ ավազակության,
- 1-ը՝ զենքի ապօրինի շրջանառության,
- 1-ը՝ սեքսուալ բնույթի գործողությունների,
- 8-ը՝ այլ հանցագործությունների դեպքերի առթիվ:
- 133 քրեական վարույթ կարճվել է, որից 69-ը՝ ռեաբիլիտացնող, իսկ 63-ը՝ ոչ ռեաբիլիտացնող, 1-ը՝ այլ հիմքով:
- 48-ով ավարտվել են վարութային եւ ապացուցողական գործողությունները, 2-ը ուղարկվել է այլ մարմին, 12-ը՝ միացվել,
- 118 վարույթ փոխանցվել է 2024թ.:

70 անչափահասի նկատմամբ ոչ ռեաբիլիտացնող հիմքերով որոշում է կայացվել քրեական հետապնդում չիրականացնելու կամ դադարեցնելու մասին: 2022-ին նույն հիմքով քրեական հետապնդում չի իրականացվել կամ այն դադարեցվել է 43 անչափահասի նկատմամբ»,- ասված է հաղորդագրության մեջ:

- *Ըստ ոստիկանության տվյալների՝ մարտի 21-ից մարտի 22-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումները բացահայտել են հանցագործության 87 դեպք, որից 3-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԴԵՄ ԵՆ ՄԻԱԿՈՂՄԱՆԻ ՀԱՆՁՆՄԱՆԸ

Մարտի 21-ի երեկոյան Նոյեմբերյան համայնքի սահմանամերձ Ոսկեվան գյուղի մշակույթի տանը կայացել է ժողով: Այդ ժողովը եղել է շատ բազմամարդ: Մոտ 40 րոպե տեւած ժողովի ընթացքում ոսկեվանցիները միակամ դեմ են արտահայտվել Ադրբեջանին միակողմանի կերպով տարածքների հանձնմանը, որը մեծ խնդիրներ է ստեղծելու նաեւ սահմանամերձ Ոսկեվանի համար: Ոսկեվանցիները ծայրահեղ դեպքում որպես փոխզիջումային տարբերակ են ընդունել սահմանազատումը Ոսկեպար գետի վտակ հանդիսացող, Բաղանիսով ձգվող, Բաղանիս-Այրում նախկին գյուղի տարածքով հոսող գետակով անցկացնելը: Ոսկեվանցիները վճռական կերպով պատրաստակամություն են հայտնել զենքը ձեռքին պաշտպանել սահմանագոտին

ԱՐՑԱԽՑԻՆԵՐԸ ԼՔՈՒՄ ԵՆ

Մարտի 18-ին Նոյեմբերյան համայնքի Ոսկեպար գյուղի մշակույթի տանը պատերազմի վերաբերյալ Նիկոլ Փաշինյանի արտահայտություններից հետո Նոյեմբերյանի սահմանագոտու գյուղերում բնակություն հաստատած արցախցիները լքում են այդ գյուղերը: Ոսկեպար գյուղից ստացված տեղեկություններով՝ Ոսկեպարում հաստատված արցախցի երեք ընտանիքներից երկուսը լքել է Ոսկեպարը: Այդ երկու ընտանիքներից մեկը տարեց ամուսիններ են, մյուս ընտանիքը բաղկացած է չորս հոգուց: Ոսկեվան գյուղում հաստատված արցախցի տասներկու ընտանիքներից չորսը պատրաստվում է հեռանալ, բնակություն հաստատել Արարատյան դաշտում, Հայաստանի այլ վայրերում: Հայաստան բեռներ ներկրող խոշոր բեռնատարների մեծամասնությունը այժմ Հայաստանի սահման Բագրատաշենից Երեւան են հասնում ոչ թե Բաղանիս-Ոսկեպար ճանապարհով, այլ Ալավերդիով: Կան բեռնատարներ, որոնք անցնում են Նոյեմբերյանով, դրանց մեծամասնությունը, սահմանագոտով անցնող ճանապարհի փոխարեն, գերադասում է Բաղանիս-Ոսկեպար շրջանցիկ՝ Հարսնաքարով ձգվող ճանապարհը:

ԳՈՐԾԱՐԿԵԼ Է ԱՎԱՋԵ ԺԱՄԱՑՈՒՅՑԸ

Մարտի 18-ին Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի սահմանամերձ Ոսկեպար գյուղի մշակույթի տանը սահմանագոտու բնակիչների հետ հանդիպման միջնամասում վարչապետ Նիկոլ Փաշինյանի աշխատակազմի աշխատողներից մեկը Փաշինյանի առաջ տեղադրել է եռագույն ավազե ժամացույցներ: Ոսկեպարի բնակիչները կարծում են, որ այդ ժամացույցները խորհրդանշում են հայոց պետականության ավարտի սկիզբը: Վարչապետ Նիկոլ Փաշինյանը նախկինում հայտարարում էր հայոց պետականության կործանման պատմական ցիկլերի մասին:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

Yandex ԾՐԱԳՐԱՎՈՐՄԱՆ ԴՊՐՈՑ

ԱՆՀԱՏԱԿԱՆ ՄՈՏԵՑՈՒՄ Է ՑՈՒՑԱԲԵՐՎՈՒՄ

Ալգորիթմային մտածողություն, տեխնոլոգիական լուծումներ գտնելու կարողություն, ժամանակը կառավարելու հմտություն եւ վերջապես գիտելիք, որը կարող է ճանապարհ հարթել դեպի տեխնոլոգիական մեծ աշխարհ. հենց այսպես են Yandex ծրագրավորման դպրոցի սաները բնութագրում այն, ինչ ձեռք են բերել դպրոցում:

«Դպրոցը, տեխնոլոգիական ոլորտում համակարգված եւ կայուն գիտելիքից բացի, կյանքի համար կարեւորագույն հմտություններից մեկն է փոխանցել՝ ժամանակը կառավարելու հմտությունը»,-ասում է Yandex ծրագրավորման դպրոցի Վանաձորի մասնաճյուղի սան Մելս Մարտիրոսյանը:

Մելսի դասընկերը՝ Ալեն Գեւորգյանն էլ հավելում է? «Դպրոցը շատ առավելություններ ունի. քանի որ խմբերը մեծ չեն, ամեն աշակերտի անհատական մոտեցում է ցուցաբերվում, ինչն ավելի հեշտ ու ըմբռնելի է դարձնում մատուցվող նյութը»:

«Յանդեքս ծրագրավորման դպրոց» նախագիծը Հայաստանում մեկնարկել է 2017 թ. հունվարին՝ Yandex Go-ի (նախկինում՝ Yandex Taxi) աջակցությամբ: Երեխաների ուսումն անվճար է, լեզուն՝ հայերեն: Դպրոց ընդունվել կարող են 9-11-րդ դասարանի աշակերտները՝ անգամ զրոյական գիտելիքով:

Ծրագիրն իրականացվում է ENTERPRISE INCUBATOR FOUNDATION հիմնադրամի հետ սերտ համագործակցությամբ՝ Վանաձորում եւ Գյումրիում հիմնադրամի ներքո գործող տեխնոլոգիական կենտրոնների հիման վրա:

Yandex ծրագրավորման դպրոցի Վանաձորի եւ Գյումրիի մասնաճյուղերի սաներն այս օրերին հնարավորություն ստացան տեսնել, թե ինչ թիմ ունի «Յանդեքս»-ը Երեւանում, աշխատանքային ինչ մշակույթ ու հնարավորություններ կան գրասենյակում, որի պատուհաններից բացվում է Երեւանի ամենաշքեղ տեսարաններից մեկը՝ Արարատ լեռան համայնապատկերը, եւ ինչ գիտելիքներ են անհրաժեշտ՝ «Յանդեքս»-ում արդեն որպես աշխատակից հայտնվելու համար. չէ՞ որ քիչ չեն այն պատանիները, որոնք դպրոցն ավարտելուց հետո աշխատանքի են անցնում թե՛ «Յանդեքս»-ում, թե՛ SS ոլորտի հայտնի ընկերություններում:

Անի Ղարագյոզյանն ու Արփինե Մարտիրոսյանը «Յանդեքս»-ի երեւանյան գրասենյակից Վանաձոր են վերադարձել ոգեւորված եւ մոտիվացված: Անին ասում է՝ ամենակարեւորը՝ պատկերացում կազմեցին ծրագրավորողների աշխարհի մասին եւ դրեցին նպատակ՝ այնքան կատարելագործվել, որ մի օր իրենք էլ աշխատանքի անցնեն այդ նույն գրասենյակում:

«Շատ կարեւոր էր խորհուրդներ լսել այն մարդկանցից, որոնք ունեն աշխատանքային փորձ եւ իրենց կրթությունը SS ոլորտում սկսել են հենց մեր տարիքից: Շատ մոտիվացնող էր նաեւ գիտակցումը, թե ինչ հնարավորություններ կարող ես ունենալ, եթե շարունակես աշխատել ինքդ քո վրա»,-ասում է Արփինեն:

Երեւանյան այցին մասնակցում էին նաեւ դպրոցի դասընթացավարները: Դպրոցի Գյումրիի մասնաճյուղի դասընթացավար Քրիստինա Մարտիրոսյանը Python ծրագրավորման լեզուն է սովորեցնում սաներին: Ասում է՝ դպրոցը մեծ դերակատարում ունի ոչ միայն քաղաքի, այլեւ ամբողջ Շիրակի մարզի կրթական կյանքում եւ շրջանավարտների մասնագիտական կողմնորոշման հարցում:

Դպրոցի համակարգող Լիլիթ Միքայելյանը կարեւորում է հանգամանքը, որ արդի տեխնոլոգիական գիտելիքները «Յանդեքս»-ը կարողանում է փոխանցել ամբողջ մարզին. սաները Շիրակի մարզի տարբեր բնակավայրերից են:

Yandex ծրագրավորման դպրոցի Վանաձորի մասնաճյուղը ներկայացնող դասընթացավար Լուսինե Կոտինյանն ասում է՝ ուսումնական ծրագիրն ինտենսիվ է, սակայն պահանջում է կանոնավոր հաճախել դասերին եւ որոշակի ժամանակ տրամադրել՝ ուսումնական նյութը յուրացնելու եւ առաջադրանքները կատարելու համար, ինչն էլ ապահովում է նրանց առաջադիմությունը:

«Առցանց հարթակում տեղադրված են ուսումնական բոլոր նյութերը՝ մշակված բարձրակարգ մասնագետների կողմից: Այդ հարթակի միջոցով սանը եւ դասավանդողը կարող են կապի մեջ լինել 24/7 ռեժիմով, ինչն էլ ավելի արդյունավետ է դարձնում դպրոցի աշխատանքը» ,-ասում է Լուսինեն:

Yandex ծրագրավորման դպրոցի տարածքային համակարգող Եղիշե Սաֆարյանը դպրոցին միացել է հենց հիմնադրման օրվանից: Խորապես գիտի՝ ինչ կշիռ ունի դպրոցը մարզային բնակավայրերի համար:

«Մարզերում շատ չեն նման հնարավորությունները, որ երեխաները անվճար որակյալ՝ միջազգային ստանդարտներին համապատասխան գիտելիք ստանան: Այդ իմաստով Yandex-ը հրաշալի հնարավորություն է Շիրակի եւ Լոռու մարզերի համար: Դպրոցն, ասես, ցատկահարթակ լինի. այստեղ ստացած գիտելիքի հիման վրա շրջանավարտները կարողանում են ավելի մեծ հորիզոններ նվաճել»,-ասում է Եղիշեն՝ ընդգծելով, որ դպրոցն արդեն ավելի քան 350 շրջանավարտ ունի Հայաստանում:

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԱՌՑԱՆՑ ԴԻՄՈՒՄԻ ՀԱՂՈՐԴԱԿԱՆ ՔԱՅԼԵՐԸ

Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունը հաղորդագրություն է տարածել, որում նշված են քայլեր կենսաթոշակը վճարող բանկը փոխելու դեպքում առցանց դիմում ներկայացնելու վերաբերյալ.

«Հարգելի՛ քաղաքացիներ,

Ձեր կենսաթոշակը (ինչպես նաեւ ծերության նպաստ, կերակրողին կորցնելու դեպքում նպաստ, հաշմանդամության նպաստ) վճարող բանկը փոխելու համար կարող եք ներկայացնել առցանց դիմում: Դիմումը լրացնելու համար անհրաժեշտ է հետեւել հետեւյալ քայլերին՝ ՔԱՅԼ 1. Անհրաժեշտ է մուտք գործել Միասնական սոցիալական ծառայության պաշտոնական կայքէջի «Առցանց դիմումներ» բաժինը՝ հետեւյալ հղմամբ՝ https://online.ssa.am/index.php?r=site%2Findex-pension

ՔԱՅԼ 2: Բացված պատուհանում սեղմել «Մուտքագրել վճարող կազմակերպության (բանկի) ընտրության դիմում» պատուհանի վրա ու լրացնել անհրաժեշտ տեղեկատվությունը:

Առցանց եղանակով դիմելուց հետո համակարգն ինքնաշխատ եղանակով կհաստատի կամ կմերժի դիմումը (նշելով մերժման պատճառները): Դիմումը հաստատվելուց հետո այդ մասին հաղորդագրություն կուղարկվի Ձեր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեին:

Արդյունքում դիմում ներկայացնելու ամսվան հաջորդող ամսվանից կենսաթոշակը կվճարվի դիմումով ընտրված բանկով:

Դիմումը մուտքագրելուց առաջ, եթե նախկինում գրանցված չեք եղել soscervice.am կայքէջում, պետք է սեղմել հարթակի վերեւի աջ անկյունում գտնվող «Գրանցում» կոճակի վրա եւ համապատասխան դաշտում լրացնել պահանջվող անձնական տվյալները»:

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 8 պատահար. 1 մարդ զոհվել է, 10-ը՝ ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

ԳՈՅՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀԱՐՑԱԿԱՆԻ ՏԱԿ

ՀՀ պետական եւ մասնավոր բարձրագույն ուսումնական հաստատությունները իշխանությունների կողմից նշանառության տակ են: Այս պահին Հայաստանում կա 23 պետական եւ 21 մասնավոր բուհ, որոնց գոյությունը հարցականի տակ է դրված մինչեւ 2030 թվականը:

Բուհերի գոյությունը հարցականի տակ է, քանի որ նաեւ երկրի վարչապետը իր խոսքում հարցականի տակ է դնում բուհերի կրթական որակը՝ ասելով՝ եթե մենք բուհերը հավատարմագրենք միջազգային ստանդարտներով, ոչ մի բուհ հավատարմագրում չի ստանա:

Այն բուհերը, որոնց հետ կապված ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը ապագա պլաններ է գծում, ավելի բարձիթողի երբեք չեն եղել:

Բանն այն է, որ Հայաստանում 7 ուսումնական հաստատություն չունի ռեկտոր, եւ դրանք ղեկավարում են ժամանակավոր պաշտոնակատարները: Այդ ուսումնական հաստատություններն են Վալերի Բրյուսովի անվան պետական համալսարանը, Երեւանի պետական տնտեսագիտական համալսարանը, Ճարտարապետության եւ շինարարության Հայաստանի ազգային համալսարանը, Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիան, Հայաստանի ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի պետական ինստիտուտը, Հայաստանի ազգային ագրարային համալսարանը եւ Երեւանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիան:

Ժաննա Անդրեասյանը եւ Նիկոլ Փաշինյանը ընկել են ցնցուղների եւ կախիչների հետեւից ու մոռացել, որ մի ամբողջ սերնդի առաջ կրթության ոլորտը զարգացնելու պարտք ունեն, ոչ թե այն խարխլելու:

Բուհերում քաոս է, նախարարությունը չի կարողանում համապատասխան որակավորմամբ մասնագետներ գտնել եւ նշանակել ռեկտորներ: Ինչպես բազմիցս գրել ենք, որ ոչ ոք ցանկություն չունի աշխատել ներկայիս իշխանության օրոք. սա գործում է նաեւ կրթական ոլորտում:

Կրթական ոլորտի քաոսը քիչ էր, հիմա էլ Նիկոլ Փաշինյանը Ճարտարապետության եւ շինարարության Հայաստանի ազգային համալսարանի ռեկտորին նշանակել է Քաղաքաշինության կոմիտեի նախագահ, իսկ Քաղաքաշինության կոմիտեի նոր ղեկավարի՝ Եղիազար Վարդանյանի մասին մարամասները կարող եք ընթերցել «Ժողովուրդ» օրաթերթի նախորդ համարում:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ

ՈՍԿԵՊԱՐԻ ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ArmLur.am-ը ուսումնասիրել է Տավուշի շրջանի 4 գյուղերում (Ոսկեպար, Բաղանիս, Ոսկեւան, Կիրանց) գտնվող պատմամշակութային կոթողները եւ այդ կոթողների ունեցած պատմական ու մշակութային արժեքները:

Նշված 4 գյուղերը կորցնելով՝ Հայաստանը, հայկական տուրիզմը կկորցնի նաեւ մի շարք կոթողներ ու տեսարժան վայրեր: Տավուշ մարզի Ոսկեպար գյուղում գտնվող մի շարք եկեղեցիներ, ամրոցներ, խաչքարեր ու հուշարձանները մեզ են հասել դեռեւս ուշ միջնադարից, 6-7-րդ դարերից, անգամ Ք.ա 2-1 հազարամյակներից: Ջուխտակ եղցին միջնադարյան վանական համալիր է: Գտնվում է Ոսկեպար գյուղից 8 կմ հարավ-արեւմուտք՝ Ոսկեպար գետի ձախակողմյան հատվածում: Ընդգրկված է Հայաստանի պատմության եւ մշակույթի անշարժ հուշարձանների ցանկում: Վանական համալիրը բաղկացած է փոքր հեռավորությամբ հյուսիս-հարավ ուղղությամբ միմյանց հաջորդող պաշտամունքային չորս կառույցներից, որոնցից երեքը եկեղեցիներ են, իսկ մեկը՝ մատուռ, ընդ որում՝ եկեղեցիներից երկուսը եւ մատուռը կանգուն են, իսկ չափերով ամենամեծ եկեղեցին՝ կիսավեր: Բերդավանքը հայ քաղկեդոնական միջնադարյան վանական համալիր է եւ գտնվում է Ոսկեպար գյուղից 6 կմ դեպի դեպի արեւմուտք՝ Ոսկեպար գետի ձախ հատվածում: Այն ընդգրկված է Հայաստանի պատմության եւ մշակույթի հուշարձանների ցանկում: Խլխլան աղբրի եկեղեցին մեզ է հասել միջնադարից: Գտնվում է Ոսկեպար գյուղից 1 կմ դեպի մի մենավոր հացենին: Ընդգրկված է Հայաստանի պատմության եւ մշակույթի անշարժ հուշարձանների ցանկում: Կալապանի եկեղեցին միջնադարից մեզ հասած հայ առաքելական եկեղեցի է, գտնվում է Ոսկեպար գյուղից 3.5 կմ դեպի հարավ-արեւմուտք՝ Վերին Ոսկեպար գյուղի մոտ գտնվող Կալապան գյուղատեղիում: Այն ընդգրկված է Հայաստանի պատմության եւ մշակույթի անշարժ հուշարձանների ցանկում: Գոմաձորի հայ առաքելական եկեղեցին մեզ է հասել միջնադարից, կառուցվել է զարգացած միջնադարում՝ 12-13 դարերում, գտնվում է Ոսկեպար գյուղից 500 մետր դեպի հարավ-արեւելք: Այն ընդգրկված է Հայաստանի պատմության եւ մշակույթի անշարժ հուշարձանների ցանկում: Հայտնի է եղել նաեւ Մուքել աղի եկեղեցի անվամբ: Անտառամուտի եկեղեցին թվագրվում է ուշ միջնադարին եւ գտնվում է գյուղի հարավարեւմտյան մասում: Սուրբ Աստվածածին եկեղեցին թվագրվում է 7-րդ դարին եւ գտնվում է գյուղից 1 կմ դեպի հյուսիս-արեւելք՝ Ոսկեպար գետի ձախ կողմում: Սուրբ Սարգիս հայ առաքելական եկեղեցին գտնվում է գյուղի հյուսիսարեւելյան հատվածում: Այն հիմնադրվել է 2000 թվականին Սարգիս Ավագի Պապյանի աջակցությամբ, ինչպես նաեւ նրա նախաձեռնությամբ եկեղեցու տարածքում տեղադրվել է խաչքար: Կոռաբերդ ամրոցը թվագրվում է 10-13-րդ դարերով, գտնվում է Վերին Ոսկեպար գյուղում՝ Ոսկեպար գյուղից 3 կմ հյուսիս-արեւմուտք՝ շրջապատի նկատմամբ իշխող դիրք զբաղեցնող վիմահերձ լեռան գագաթին: Գյուղից մոտ 8 կմ դեպի արեւմուտք՝ Ոսկեպարի գետի հոսանքով դեպի վեր, գտնվում է Ք.ա. 2-1 հազարամյակով թվագրվող «Շաքարաբերդ» ամրոցը: Գյուղի տարբեր հատվածներում գտնվում են ամրոցներ, որոնց անունը հայտնի չէ, բայց պահպանված արձանագրություններից իմանում ենք, որ 6-7-րդ, 10-13-րդ, 10-14-րդ դարերի կառույցներ են: Գյուղի կամուրջներից մեկը թվագրվում է ուշ միջնադարին (անունը հայտնի չէ), իսկ մյուս՝ Ջորու կամուրջը թվագրվում է 8-րդ դարին եւ գտնվում է գյուղից 4 կմ դեպի արեւմուտք: Գյուղն ունի հուշաղբյուր, որը կառուցվել է 1983 թվականին եւ նվիրվել է Երկրորդ աշխարհամարտում զոհվածների հիշատակին, եւ հուշարձան՝ կառուցված 1978 թվականին՝ Երկրորդ աշխարհամարտում զոհվածների հիշատակին:

ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆ

ՖԻՆԱՆՍՆԵՐ

ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ՎԱՐԿԵՐԻ ԾԱՎԱԼԸ՝ ԲԱՆԿԵՐՈՒՄ

ArmLur.am-ը գրել էր, որ նախորդ տարի հիպոթեքային վարկը, մյուս տարիների համեմատ, ռեկորդային թիվ է գրանցել՝ գրեթե հասնելով տրիլիոնի, բայց 2024 թվականին այն չի հատել տրիլիոնի սահմանը:

2023 թվականին Հայաստանի Հանրապետությունում գործել են Կենտրոնական բանկի կողմից լիցենզավորված 42 վարկային կազմակերպություններ, 2024 թվականի մարտի 12-ի դրությամբ Հայաստանի Հանրապետությունում գործում են ԿԲ կողմից լիցենզավորված 41 վարկային կազմակերպություններ (1 վարկային կազմակերպություն վերակազմավորման ձեւով միացել է մեկ այլ վարկային կազմակերպության):

2000 թվականին Հայաստանում գյուղություն չուներ սպառողական կամ հիպոթեքային վարկ հասկացությունները, նույնիսկ սպառողական ոլորտում ֆինանսական շրջանառությունը զրո էր:

2004-2005 թվականներին զգալիորեն փոխվեց ֆինանսական շրջանառության պատկերը:

2005 թվականի ապրիլին առաջին անգամ ձեւավորվել է հիպոթեքային վարկը, եւ դեկտեմբեր ամսվա համար այն կազմել էր 5 մլդ դրամ: Եթե համեմատենք այս օրվա հիպոթեքային վարկի շեմի հետ, ապա կարող ենք հստակ արձանագրել, որ այժմ չկա նման փոքրիկ թիվ: Մեկ անձի համար միջին հիպոթեքային վարկի արժեքը սկսվում է 10 մլն դրամից, ինչն էլ բնակարանաշինության եւ եկամտահարկի ֆոնին տարեցտարի աճում է:

2024 թվականին՝ նշված տվյալներից գրեթե 20 տարի անց, ՀՀ-ում հիպոթեքային վարկի շեմը հունվար ամսին կազմել է 1 տրիլիոն 78 մլդ դրամ: 2024 թվականի հունվարին արդյունաբերության, գյուղատնտեսության, շինարարության, տրանսպորտի եւ կապի, առեւտրի, սպասարկման ոլորտի, սպառողական վարկերի եւ հիպոթեքային վարկերի շրջանառությունը կազմել է 4 տրիլիոն 617 միլիարդ դրամ:

2004 թվականին դեկտեմբերին ձեւավորվեց եւ առաջին անգամ մտավ շրջանառության մեջ դեկտեմբեր ամսին՝ 39 մլդ դրամ: 2024 թվականի հունվարին սպառողական վարկի շրջանառությունը կազմել է 1 տրիլիոն 101 մլրդ դրամ: 2023 թվականին եւս սպառողական վարկերի ծավալը բանկերում հատել է 1 տրիլիոն դրամի շեմը:

Ինչպես վերջին մի քանի տարիներին, այնպես էլ հիմա բանկերի վարկային պորտֆելում այսօր ամենամեծ կշիռն ունեն հիպոթեքային ու սպառողական վարկերը:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

«ԿՅԱՆՔ, ՍԵՐ, ԳԻՆԻ»

ՀԱՍՏԱՏՎԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հնդիկ գործարար, ժամանակակից գրող, «Penguin Harper-Collins»-ի հեղինակ Արջուն Կրիշնա Լալն ավելի քան երկու տարի է՝ հաստատվել է Հայաստանում: Նրա կյանքը լի է արկածներով, հետաքրքիր հանդիպումներով ու բացահայտումներով: Արջունին այնքան են ոգեւորել իր շուրջ կատարվող իրադարձությունները, որ այդ ամենի մասին խոսել է գրքով՝ այն անվանելով «Կյանք, սեր, գինի»:

Հեղինակը գիրքն ընթերցողների լայն շրջանակին ներկայացրեց մարտի 22-ին «Զանգակ» գրատանը կազմակերպված հանդիպմանը:

Նա խոստովանում է՝ Հայաստանում իրեն զգում է, ինչպես տանը, քանի որ հայերը շատ հյուրասեր են եւ սրտաբաց, բացի այդ, Արջունը հայերեն է սովորել եւ հաղորդակցման խնդիր չունի:

«Շատ եմ ճամփորդում. մոտ տասնհինգ երկրում եմ եղել եւ եկել եմ այն եզրակացության, որ եթե ցանկանում ես մտերմանալ մարդկանց հետ, եթե ցանկանում ես ընկերներ ունենալ, պետք է տվյալ մարդու լեզուն սովորես: Տարիներ առաջ ռուսերեն եմ սովորել: Կարող էի Հայաստանում ռուսերեն կամ անգլերեն խոսել, բայց կարծեցի՝ այդպես կհեռանամ մարդկանցից»,-ասում է նա:

Արջունը գիրքը գրել է անգլերեն, այն հայերեն է թարգմանել Ռոզա Գրիգորյանը, գիրքը խմբագրել է հեղինակի հայերենի ուսուցիչը՝ Արմինե Պետրոսյանը:

«Երբ ծանոթացա Արջունի հետ, նա ապրում էր Հնդկաստանում: Նա այն հազվագյուտ ուսանողներից էր, որ իսկապես շահագրգռված էր հայերեն սովորելուն երկար ժամանակ տրամադրել: Շատ ընդունակ է եւ կարողացավ մի քանի ամսում տարրական գիտելիքներ ձեռք բերել: Արջունն ուներ այն հիմքը, որի շնորհիվ կարողացավ լուծել իր լեզվական առաջադրանքը»,-պատմում է Պետրոսյանն ու մեջբերում Արջունի խոսքերը, որոնք տեղ են գտել գրքում. «Հայերենը գողի պես սողոսկեց մտքերիս մեջ, ոչ անցանկալի գողի պես: Այս լեզուն ինձ առաջ է մղում օրվա ընթացքում եւ բալանսավորված է պահում իմ կյանքը եւ գիշերը հայտնվում է իմ երազներում»:

Տարիներ առաջ Արջուն Կրիշնա Լալը Հնդկաստանում իր բիզնեսն է սկսել: Հենց այդ ժամանակ էլ համավարակն է թափ առել: Շուրջ կես տարի ստիպված է եղել ծնողների հետ փակվել տանը: «Մի քիչ խենթանում էի այդ իրավիճակից եւ շատ էի ցանկանում բոլորովին նոր տեղում հայտնվել: Փոքր ժամանակ ԱՄՆ-ում եմ ապրել, հետո՝ տասը տարի Հնդկաստանում, ուստի ուզում էի բոլորովին անծանոթ երկիր մեկնել: Առցանց կարդում էի տարբեր քաղաքների մասին եւ հանդիպեցի Երեւանին: Շատ գեղեցիկ լուսանկարներ էին՝ Արարատ լեռն էր... Որոշեցի հենց այստեղ գալ»,-պատմում է հեղինակը:

Նա կարծում է՝ մարդիկ միշտ արժեւորում են այն ամենը, ինչը չունեն: «Հայաստանում շատերը սիրում են տրոպիկական երկրներ գնալ: Խմբային տուրերով մեկնում են Շրի Լանկա եւ այլուր: Զգտում են ծովափ գնալ, լողալ: Ես մի քիչ ձանձրանում եմ օվկիանոսից: Մեր տանից այն երեւում էր: Այլ բան էի ուզում: Այստեղի ձյունը, ցուրտ եղանակն ինձ դուր է գալիս: Հայաստանի գրեթե բոլոր մարզերում եղել եմ: Եղել եմ շատ գյուղերում, որտեղ ընկերներ ունեմ, նրանց հետ տնական օղի եմ փորձել: Հայաստանը միայն Երեւանը չէ: Սիրում եմ տաքսիով կամ երթուղայինով տարբեր տեղեր մեկնել, մի քանի օր անցկացնել մարզերում ու բացահայտումներ անել»,-ասում է Կրիշնա Լալը:

Նա սիրում է Կասկադի ամենավերեւի հատվածում երկար ժամանակ անցկացնել երեկոյան: Հենց այնտեղ է գրել գրքում ներառված պատմությունների մեծ մասը:

Արջունը վստահ է՝ իր երազանքներն իրականանում են: Իր ամենախենթ նպատակն է ՀՀ քաղաքացիություն ստանալ, հետագայում դառնալ Հայաստանի դեսպանը Հնդկաստանում:

«ԱԼԹՈՒՆՅԱՆ» ՊԵՏԱԿԱՆ ԱՆՍԱՄԲԼ

ԱՎԵԼԻ ՔԱՆ 30 ՀԱԶԱՐ ՀԱՆԴԻՍԱՏԵՍ

Հայաստանի «Ալթունյան» պետական անսամբլի ֆրանսիական հյուրախաղերին արդեն մասնակցել է ավելի քան 30 հազար հանդիսատես: Անսամբլը Ֆրանսիայում ՀՀ դեսպանատան աջակցությամբ եւ «Ս.Ա.Ս. շոուներ բոլոր երկրներից» կազմակերպության հրավերով փետրվարի 28-ից Ֆրանսիայի Հանրապետությունում է եւ հանդես է գալիս «Հայաստանի երգերը, պարերը եւ տարազները» համերգային ծրագրով:

Հյուրախաղային ծրագրում ներառված է 23 համերգ, որոնք ներկայացվում են Ֆրանսիայի տարբեր շրջաններում, ինչպիսիք են Բրետտանը, Օքսիտանիան, Նուվել-Աքվիտանիան, Օվերն-Ռոն-Ալպը, Փլեյս դը լա Լուարը եւ Վալդե Լուարը:

Հայաստանի «Ալթունյան» պետական համույթն արդեն համերգներով հանդես է եկել Սենթ Դոմնիյոկի «Գրան կլոզ» համերգասրահում, Բոժ ան Անժույի «Ռենե դ'Անժուի անվան մշակութային կենտրոնում» եւ «Ալտրեա» համերգասրահում, Թուլուզի «Բարիեր խաղատան» համերգասրահում, Ֆիժեակի «Ֆրանսուա Միտերանի անվան կենտրոնում», Բուլազակի «Պալիո» համերգասրահում, Մոզակի «Արլեքին» համերգասրահում, Մեզոսի «Միրաժ» համերգասրահում, Սոժոնի «Սալիկորն» համերգասրահում, Լը Մանսի «Կոնգրեսների պալատում», Ֆեյտիատի «Ժորժ Բրասենս կենտրոնում», Սենթ Բրեւենի «Էթուալ դը Ժադ կենտրոնում» եւ Լ'Անկլուատրի «Մուլտիմեդիայի սրահում»:

Այս պահին համույթը Շեսի քաղաքում է, որտեղի Ժորժ Սանդի անվան կենտրոնում համերգային կատարումներով հանդես է գալու մինչեւ մարտի 28-ը: Եզրափակիչ համերգը կկայանա մարտի 29-ին Մամերս քաղաքի «Սոգոնա սրահում»:

ՄԱՐԶԱԿԱՆ

ՖԱՎՈՐԻՏՆԵՐ ՉԿԱՆ

Կոսովոյի ֆուտբոլի ազգային թիմի գլխավոր մարզիչ Ֆրանդո Ֆոդայի կարծիքով՝ մարտի 22-ին կայանալիք Հայաստանի դեմ ընկերական խաղում ֆավորիտներ չկան:

«Մենք պատրաստ ենք Հայաստանի դեմ ընկերական այս խաղին, սակայն մեզ համար չկան ընկերական հանդիպումներ: Այս խաղով մենք պատրաստվում ենք Ուելսի դեմ առաջիկա պաշտոնական հանդիպմանը: Երկու թիմերն էլ տեխնիկապես լավ պատրաստված ֆուտբոլիստներ ունեն»,- լրագրողների հետ հանդիպման ժամանակ ասաց Ֆոդան:

Վերջինիս խոսքով՝ վերջին երեք օրերին նրանք կենտրոնացած են եղել տակտիկայի վրա, եւ իր թիմը ցանկություն ունի հաղթել բոլոր հանդիպումներում, իսկ ֆավորիտներ չկան առաջիկա ընկերական խաղում:

Կոսովոյի ազգային թիմի անդամ Վեդատ Մուրիքին ընկերական այս խաղի ֆավորիտ համարում է իր թիմին, սակայն Կոսովոյի հավաքականի ֆուտբոլիստները անհատապես պետք է ապացուցեն դաշտում, թե ինչի են ունակ:

«Հայաստանի ֆուտբոլի ազգային թիմից գիտեմ Ռանոսին, ինչպես նաեւ Հարոյանին: Մենք լավատեղյակ ենք Հայաստանի ֆուտբոլի հավաքականից, քանի որ ուսումնասիրել ենք նրանց»,-ասաց նա:

Հայաստանի ֆուտբոլի ազգային թիմը մարտի 22-ին Երեւանում կընդունի Կոսովոյի հավաքականին, իսկ մարտի 26-ին արտագնա մրցախաղ կունենա Չեխիայի հետ:

ՈՐԴՈՒՍ ՀԵՏ ԵՄ ՄԱՐԶՎՈՒՄ

Հայաստանի հավաքականի նախկին ավագ, Իտալիայի Ա Սերիայի առաջատար Միլանի «Ինտերի» կիսապաշտպան Հենրիխ Մխիթարյանը ակումբային յութուբյան ալիքի FROG TALKS շարքի եթերում «Ինտերի» եւ Իտալիայի հավաքականի նախկին ֆուտբոլիստ Անդրեա Ռանոկիայի հետ զրույցում պատմել է, որ 4-ամյա որդին ֆուտբոլիստ դառնալու մտադրություն ունի:

«Միշտ ասել եմ, որ կարիերաս ավարտելուց հետո ցանկանում եմ մնալ Միլանում, բայց որդիս ֆուտբոլ է խաղում: Ամեն ինչ կախված է դրանից: Որդիս 4 տարեկան է, բայց արդեն տանը խաղում է ֆուտբոլ: Թիմի հետ եմ մարզվում, հետո տանը որդուս հետ եմ մարզվում: Որդիս կարող է Միլանում սկսել մարզվել: Դուստրս 8 ամսական է:

Ֆուտբոլային մարզիչ դառնալու ցանկություն չունեմ: Ես արդեն իմ ժամանակն անցկացրել եմ խաղադաշտում: Մարզչական աշխատանքն ավելի շատ ժամանակ է պահանջում, վերլուծություն, խաղացողների հետ քննարկումներ: Ոչ, չեմ ցանկանում: Գուցե, սպորտային տնօրենի աշխատանքն ավելի հնարավոր է»,- ասել է Հենրիխ Մխիթարյանը:

35-ամյա ֆուտբոլիստի պայմանագիրն «Ինտերի» հետ նախատեսված է մինչեւ 2026թ. հունիս:

●Մարտի 26-ին «Արամ Խաչատրյան» համերգասրահում տեղի կունենա «Սամվել Երվինյան. 50 տարի ջութակի հետ» համերգը: Տոմսերի արժեքը՝3000-20000 դրամ: Սկիզբը՝ժամը 19:30-ին:

ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ՄԱՐԻԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆԻ

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ի՞նչ փաստաթղթեր են անհրաժեշտ տվյալ հաստատություն սովորողի ընդունելության եւ տեղափոխման համար:

Արաքսյա Գրիգորյան (49 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. ՀՀ ԿԳ նախարարի N 1640-Ն /24.11.2010թ./ հրամանով հաստատված «Դպրոցական տարիքի երեխաներին հանրակրթության մեջ ընդգրկելու, սահմանված ժամկետից ուշ հանրակրթության մեջ ընդգրկվող երեխաների կրթության կազմակերպման եւ հանրակրթական ուսումնական հաստատությունից սովորողին այլ ուսումնական հաստատություն տեղափոխելու/ազատելու կարգի» 25-րդ կետի համաձայն՝ սովորողին հաստատություն ընդունելու համար ծնողը (նրա օրինական ներկայացուցիչը) ներկայացնում է՝

1) դիմում՝ ուղղված տնօրենին,

2) սովորողի հանրային ծառայության համարանիշի կամ դրանից օրենքով սահմանված կարգով հրաժարված լինելու մասին տեղեկանքի պատճենը,

3) 3x4 չափի լուսանկար՝ «Կրթության կառավարման տեղեկատվական համակարգում» սովորողի էլեկտրոնային անձնական գործում վերբեռնելու նպատակով,

4) եզրակացություն՝ «Կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաների տեղեկատվական համակարգում» հաշվառված լինելու վերաբերյալ՝ տրված սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային կառավարման պետական մարմնի կողմից (ըստ անհրաժեշտության),

5) նախնական (արհեստագործական) կամ միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններից տեղափոխվելու դեպքում՝ տեղեկանք տվյալ հաստատությունում ուսումնառության ժամկետների, ուսումնասիրած առարկաների, ուսումնական տարվա ընթացքում տեղափոխվելիս՝ նաեւ ընթացիկ եւ կիսամյակային գնահատականների, բացակայությունների քանակի մասին,

6) եզրակացություն՝ տրված սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային կառավարման պետական մարմնի կողմից՝ հանրակրթական հատուկ դպրոց ընդունվելու համար (ըստ անհրաժեշտության):

ՀՀ ԿԳՄՍ նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նշված կարգի 29-րդ կետի 3-րդ եւ 4-րդ ենթակետերով սահմանված դեպքերում անհրաժեշտ է նաեւ փաստաթուղթ՝ զինվորական կոմիսարիատից:

ՄՇԱԿՈՒՅԹ

ՀԱՐՑ. Ի՞նչ կարգով է իրականացվում մշակութային արժեքների ժամանակավոր ներմուծումը:

Արամ Սողոմոնյան (48 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Մշակութային արժեքների ժամանակավոր ներմուծումն իրականացվում է՝ ՀՀ կառա-վարության 2007 թ. հունիսի 1-ի N 827-Ն որոշման պահանջների համաձայն:

ՀՀ ԿԳՄՍ նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Մշակութային արժեքներ ժամանակավոր ներմուծելիս հայտատուն մաքսային մարմին պետք է ներկայացնի հայտարարագիր, մշակութային արժեքներն ու դրանց լուսանկարները /3 օրինակ/: Մաքսային մարմնում համապատասխան ընթացակարգով ձեւակերպվում է մշակութային արժեքների ժամանակավոր ներմուծումը՝ «Ժամանակավոր ներմուծում» մաքսային ռեժիմով:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

35-ամյա երեւանցին մեկ օրում վնասել է Սյունիքից մինչեւ Արարատի մարզ տեղադրված արագաչափերը:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ____________

Ազգանուն՝ ____________

Առաքման հասցե՝ ____________

Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ ____________

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	- 2 + 1	+ 3 + 7
Կոտայքի լեռներ	0 - 2	+ 2 + 5
Կոտայքի նախալեռներ	+ 4 + 6	+ 8 + 10
Գեղարքունիք	0 - 3	+ 2 + 5
Լոռի	- 2 + 2	+ 5 + 8
Տավուշ	+ 3 + 6	+ 7 + 10
Արագածոտնի լեռներ	0 - 2	+ 2 + 4
Արագածոտնի նախալեռներ	+ 3 + 6	+ 5 + 9
Արարատ	+ 5 + 7	+12 + 14
Արմավիր	+ 4 + 6	+12 + 13
Վայոց ձորի լեռներ	0 - 2	+ 2 + 6
Վայոց ձորի նախալեռներ	+ 5 + 7	+10 + 13
Սյունիքի հովիտներ	+ 2 + 5	+ 9 + 12
Սյունիքի նախալեռներ	- 2 + 2	+ 5 + 7
ԼՂՀ	- 2 + 1	+ 5 + 6
Երեւան	+ 8 + 10	+13 + 15

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **21.3.2024**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*